

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍՏ ԵՐԿՐԱՆՈՐԺԻՆ ՅԱԶՈՐԴՈՂ ԺԱՄԵՐՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵՅ



Երեքշաբթի, 14 Փետրուար 2023-ին, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութեան տուեալներով, Սուրիոյ մէջ երկրաշարժի զոհերուն թիւը հասաւ 1414-ի, իսկ վիրաւորներունը՝ 2357-ի: Երկրաշարժին հետեւանքով Սուրիոյ մէջ փոլ եկաւ շուրջ 300 շէնք, եւ փլատակներուն տակէն դուրս բերուեցան գոհեր եւ վիրաւորներ: Փրկարարներու խմբակներուն կողմէ 8 օր որոնողական աշխատանքներ եւ գոհեր փլատակներուն տակէն դուրս բերելու գործողութիւնները շարունակուեցան:

Երկրաշարժէն քանի մը ժամ ետք, Սուրիոյ Նախագահ Պաշար ավ-Ասատ արտակարգ ժողով մը նախագահեց՝ քննարկելու համար Սուրիոյ ցնցած երկրաշարժին վնասները: Ժողովին ընթացքին, Նախագահ Ասատ արտակարգ իրավիճակ յայտարարեց Նախարարութիւններուն եւ Նահանգներուն, անոնց ենթակայ հաստատութիւններուն համար:

ԿՐԹԱԿԱՆ ՈՒՐՈՐՏ


Սուրիան ցնցած երկրաշարժին հետեւանքով 248 դպրոց վնասուեցաւ: Անոնցմէ 71-ը՝ Զալէպ, 50-ը՝ Լաթաքիա, 27-ը՝ Զամա, 99-ը՝ Թարթուս եւ դպրոց մը Իտլիպ:

Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը 99 դպրոց յատկացուց որպէս ապաստան այն քաղաքացիներուն, որոնք իրենց բնակարանները կորսնցուցին երկրաշարժի հետեւանքով: Դպրոցներուն մէջ ապաստան գտան շուրջ 17,000 քաղաքացիներ, անոնց կը տրամադրուի ուտեստեղէն, ջուր եւ վերմակներ: Նախարարութեան որոշումով, Զալէպի, Զամայի, Լաթաքիոյ եւ Իտլիպի մէջ վնաս չկրած դպրոցները վերաբացուեցան Կիրակի, 12 Փետրուար 2023-ին:

Երկրաշարժին հետեւանքով, Սուրիոյ Բ ար թ ո ղ յ Ն Կ ր թ ո լ թ Ե ա ն Նախարարութիւնը յետաձգեց կիսամեայ քննութիւնները մինչեւ 18 Փետրուար 2023:



ՀԱԼԵՊ, ԻՏԼԻՊ, ՀԱՍՍ ԵՒ ԼԱԹԱՔԻԱ ԱՂԵՏԵԱԼ ԳՕՏԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԵՅԱՆ



Ուրբաթ, 10 Փետրուար 2023-ին, Սուրիոյ Նախարարներու Խորհուրդը Զալէպի, Լաթաքիոյ, Զամայի եւ Իտլիպի երկրաշարժէն վնասուած շրջանները աղէտեալ գօտի յայտարարեց:

Յետ երկրաշարժին, Զալէպի Ջուրի Ընկերութիւնը ջուրը անջատեց երկրաշարժէն առաւելաբար տուժած շրջաններուն մէջ, ջրաբաշխման խողովակներու ստուգման համար: Զանի մը օր ետք, Ընկերութիւնը ջուրը վերստին հասանելի դարձուց բոլոր շրջաններուն:

Երկրաշարժէն 2 օր ետք, Սուրիոյ վարչապետ Զուսէյն Արնուս Զալէպ ժամանեց՝ Սուրիան ցնցած երկրաշարժի վնասուածքները ստուգելու:

Շար.՝ էջ 10 >

ՍՈՒՐԻԱՆ ՃՆՃԵՅԻՆ ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ԵՐԿՐՈՒ ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՆՈՐԺՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԵՅԱՆ 2 ՀԱՅ ԶՈՂԵՐ, ՏԱՆԵԱԿ ՎԻՐԱԽՈՐՆԵՐ

Երկուշաբթի, 6 Փետրուարի առաւօտուն ժամը 4:17-ին, Թուրքիոյ Աղեքսանտրէթ քաղաքին եւ Սուրիա-Թուրքիա սահմանին տեղի ունեցան երկու յաջորդական երկրաշարժներ 7,8 ռիխթըր եւ 6,4 ռիխթըր ուժգնութեամբ:



Երկրաշարժը ցնցեց Սուրիան, յատկապէս Զալէպ, Լաթաքիա, Զամա եւ Իտլիպ Նահանգները:

Երկրաշարժի ցնցումներուն հետեւանքով փոլ եկած բնակարանի մը փլատակներուն տակ զոհուեցան երկու հայկապահայեր՝ մայր եւ որդի Միրա Մինասեան-Թենքեճեան եւ Ալպեր Նարեկ Թենքեճեան:

Նոյն օրը Զալէպի բնակչութեան մեծամասնութիւնը իր բնակարաններէն դուրս՝ ինքնաշարժներու, ակումբներու եւ եկեղեցիներու մէջ անցուց գիշերը: Երկրաշարժի թեթեւ յետցնցումները շարունակուեցան պարբերաբար մինչեւ լուսաբաց եւ յաջորդող տասը օրեր:

Զալէպի հայկական ակումբները, եկեղեցիները, Արամ Մանուկեան Ժող.տունն ու Զարէն Եփփե ազգ.ճեմարանը երկրաշարժէն տուժած ժողովուրդին ապաստարան դարձան 6 օր շարունակ:

Ազգ. Երեսփոխանական 173-րդ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՎ

Սուրիան ցնցած երկրաշարժին հետեւանքով, ինչպէս Սուրիոյ ժողովուրդը այնպէս ալ սուրիահայութիւնը դէմ յանդիման գտնուեցաւ աննախադէպ աղէտի մը, որուն հետեւանքներուն լուծումները անյետաձգելի հրամայական դարձան:



Արդարեւ, Շաբաթ 11 Փետրուար 2023-ին, միջօրեի ժամը 12:00-ին, Ազգ. Երեսփոխանական Ժողովի դիւանը հրաւիրեց Ազգ. Երեսփոխանական 173-րդ արտակարգ ժողովը, նախագահութեամբ՝ Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, քննելու աղէտին հետեւանքով յառաջացած իրավիճակը:

Ժողովին մասնակցեցան նաեւ Սուրիահայ Օգնութեան Խաչի Շրջ. Վարչութեան ատենապետուհին, Բերիոյ Զայոց Թեմի «Գանձասար» պաշտօնաթերթի խմբագիրը եւ Թեմի Յարաբերական Մարմինէն անդամ մը:

Ժողովը ընթացք առաւ Առաջնորդ Սրբազան Զօր աղօթքով եւ Ս. Գրային ընթերցումով, եւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետին զօրակցական Նամակի ընթերցումով, որուն յաջորդեցին Ազգ. Վարչութեան եւ այլ

Դիւան
 Ազգ. Երեսփոխանական Ժողովի
 Շար.՝ էջ 4 >

Խմբագրական

**ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՅԱՌԱՋԱՑՈՒՑԱԾ ԱՂԵՏԸ
ԴԻՄԱԳՐԱԲԵԼՈՒ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՄԲ**

6 Փետրուարը ահասարսուռ օր մը եղաւ Սուրիոյ ժողովուրդին ու սուրիահայութեան համար: Առաւօտեան վաղ ժամերուն սկսած ու իր ուժգնութեամբ եւ երկարատեւութեամբ վերջին յիսուն տարիներուն Սուրիոյ պատմութեան մէջ աննախադէպ համարուած երկրաշարժը ոչ միայն անբնական գործեց, կեանքեր իւլեց, այլեւ ահ ու սարսափի մատնեց ժողովուրդը:

Բնութեան հարուածը այնքան ուժեղ էր, իսկ շարունակուող յետցնցումները այնքան յաճախակի, որ մարդիկ օրեր շարունակ չկրցան յաղթահարել երկրաշարժին յառաջացուցած վախն ու կորուստներուն ցաւը:

Երկրաշարժէն առաւելաբար տուժեցին Սուրիոյ Յալէպ, Լաթաքիա, Յամա եւ Իտլիպ նահանգները: Փոլ եկան շէքեր, քարուքանդ եղան կառոյցներ, բնակարաններու մեծ թիւ մը լուրջ վնասներ կրեց ու շատեր անօթեւան մնացին:

Սուրիոյ ժողովուրդը տակաւին չէր թօթափած տասներեք տարիներու վրայ երկարող պատերազմին ապահովական, ընկերային, յատկապէս տնտեսական հետեւանքները: Սղաճը, կենցաղային պայմաններու վատթարացումը, սուրիական լիրային անկումը յաղթահարելու համար, սուրիահայութիւնը իր կարելի բոլոր միջոցներով կը տոկար ու կը գոյատեւէր, պահելով իր ազգային ու միութենական կենսունակութիւնը, կրթամշակութային կեանքի վերաորակաւորման ծրագիրներ մշակելով եւ պատերազմի հետեւանքով իր վնասուած կառոյցներն ու բնակարանները վերականգնելով: Ու վրայ հասաւ երկրաշարժը, իր աղէտալի հետեւանքները եւս կուտակելով համայնքին ու բնակչութեան դիմագրաւած դժուարութիւններուն վրայ:

Երկրաշարժի յաջորդող ժամերուն, սակայն, համայնքի պատասխանատու մարմիններն ու երիտասարդները զօրաշարժի ենթարկեցին իրենց կարելիութիւններն ու փութեամբ աղէտահար ժողովուրդի օգնութեան:

Երկրաշարժէն առաւելաբար վնասուած քաղաքներուն մէջ առաւելաբար կեդրոնացած է սուրիահայութեան մեծամասնութիւնը:

Ուստի Յալէպի եւ Լաթաքիոյ մէջ ազգային մարմինները առաջին հերթին բաց պահեցին ակումբները, եկեղեցիներն ու ժողովրդային տուները, որպէսզի այդ կեդրոններուն մէջ ապաստանին մեր ժողովուրդի զաւակները: Այդ կեդրոններէն ներս ապահովուեցան կենցաղային բոլոր պայմանները՝ սնունդ, ջեռուցում, էլեկտրականութիւն, կեցութեան այլ յարմարութիւններ եւ այլն:

յԳնահատելի աշխատանք տարին մեր ակումբներու երիտասարդները, պահակ տղաքը, որոնք գիշեր-ցերեկ հսկեցին ապաստանեալ ժողովուրդին, հոգացին անոր կարիքները եւ անհրաժեշտութեան պարագային հիւանդանոց հասցուցին վատառողջ ապաստանեալներ:

Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդին ապաստարաններ այցելութիւնը գօտեպնդեց համայնքի զաւակները:

Յաւօք համայնքի զաւակներէն երկուքը զոհուեցան երկրաշարժի առաջին վայրկեաններուն, տասներեք մը վիրաւորներ հիւանդանոց տեղափոխուեցան ու երկրաշարժի

յետցնցումներուն վախազդու տագնապը շարունակուեցաւ յառաջիկայ օրերուն եւս:

Բերիոյ Յայոց Թեմի Ազգ? Իշխանութիւնը գումարելով Ազգ? երեսփոխանական արտակարգ ժողով մը, տագնապի յաղթահարման առաջնահերթութիւնները ճշդեց: Յառաջացաւ Բերիոյ Յայոց Թեմի երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմին մը, որ յառաջացուց համապատասխան յանձնախումբեր? մէկը՝ ցանկագրելու վնասուած բնակարաններ ունեցող համայնքի զաւակներուն դիմումագրերը, միւսը՝ մասնագետ երկրաչափներէ բաղկացած, հետախուզական աշխատանք տանելու եւ ստուգելու վնասուած բնակարանները, իսկ վերջինը՝ ցանկագրելու համայնքին կրած նիւթական եւ մարդկային վնասները:

Վնասուած բնակարաններու ցանկագրման դիմումներ ընդունեց նաեւ Յայ Բարեգործական Ընդհ? Միութիւնը:

Բնակարաններուն կողքին վնասուած էին նաեւ ազգային շարք մը կառոյցներ եւ եկեղեցիներ, որոնք եւս վերանորոգման կը կարօտին:

Յամայնքի զաւակներուն ապրած այս ծանր օրերուն գօտեպնդիչ ազդակ հանդիսացաւ ՆՍՕՏՏ Արամ Ա? Վեհափառ Յայրապետին հովուապետական եւ զօրակցական այցելութիւնը Յալէպ: Հովուապետը իր շքախումբով ժամանած էր միտիթարելու սուրիահայութիւնը, մօտէն տեղեկանալու արձանագրուած մարդկային եւ նիւթական վնասներու տարողութեան, պատրաստակամութիւն յայտնելու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերուն, կառոյցներուն եւ մարմիններուն անունով սատար կանգնելու սուրիահայութեան, ապա նաեւ համայն հայութեան կոչ ուղղելով օգնութեան ձեռք մեկնելու Սուրիոյ, մասնաւորաբար Յալէպի հայութեան, որպէսզի այս աղէտը եւս յաղթահարէ ու վերականգնելով շարունակէ իր կեանքը ծաղկեցնել:

Նորին սրբութիւնը Յալէպի մէջ, լրատուամիջոցներուն դիմաց, կոչ ուղղեց միջազգային համայնքին վերջ տալու Սուրիոյ դէմ սահմանուած պատժամիջոցներուն եւ կարելի փութով օժանդակելու Սուրիոյ ժողովուրդի անհրաժեշտ կարիքներուն:

Ներկայ դժուարին պայմաններուն մէջ սուրիահայ համայնքին անհրաժեշտ է ուժերու գերլարում եւ միասնակամութիւն՝ ծրագրեալ աշխատանքով յաղթահարել կարենալու այս աղէտը, անկոտրում կամքով վերականգնելու համայնքը եւ յոյսի նոր հորիզոններ առաջնորդելու համայնքի զաւակները:

Բնութեան յառաջացուցած այս աղէտին հետեւանքները հաւանաբար պիտի երկարին ամիսներու վրայ: Տնտեսականին կողքին յատկապէս համայնքի զաւակներուն հոգեկան տագնապի յաղթահարումը ժամանակի պիտի կարօտի անկասկած, սակայն աշխատանքն ու իրատես լուծումներով հարցերու դիմագրաւումը կրնան ուղենիշ դառնալ բարուք օրերու, յատկապէս երկրին դէմ տնտեսական պատժամիջոցներու մասամբ մեղմացման հաւանականութիւնը նկատի ունենալով:



ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԺԱՄԱՆԵՅՆ ՈՐՈՆՈՂԱԾՐԿԱՐԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Հայաստանի Հանրապետությունն ժամանած փրկարարներու խումբը սկսաւ իր ծառայութեան:

Խումբը 8 Փետրուարի երեկոյեան ժամը 23 00-էն սկսեալ Հալէպի «Շաար» շրջանին մէջ փուլ եկած շէնքերու փլատակներուն տակէն մարդկային կեանքեր փրկելու աշխատանքին լծուած է:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀՐԱՏԱԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԱԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՒՅՈՒՄԵՐԵՅՆ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Նկատի առնելով 6 Փետրուարին տեղի ունեցած աներիչ երկրաշարժը, ինչ որ անելի խորացուց Սուրիոյ մէջ արդէն տարիներ շարունակուող մարդասիրական ճգնաժամը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը նիւթական աջակցութիւն տրամադրեց Սուրիոյ Հալէպ քաղաքին մէջ գործող 15, ինչպէս նաեւ Դամասկոսի, Լաթաքիոյ եւ Զեսապի հայ կրթական հաստատութիւններուն:

Հիմնադրամի հրապարակած հաղորդագրութեան մէջ նշուեցաւ, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմինին՝ «Ֆրանսայի հայկական հիմնադրամ»-ին կողմէ տրամադրուած 100 հազար տուարը պիտի ուղղուի այդ կրթական հաստատութիւններուն, ուր աշխատող շուրջ 1100 ուսուցիչները եւ թեքնիք անձնակազմը պիտի ստանան նիւթական աջակցութիւն: Երկրաշարժէն վնասուած են նաեւ համայնական կրթական եւ եկեղեցական կառոյցներ, ներառեալ նաեւ Հալէպի մէջ գտնուող «Զարէն Եփփէ» ազգային ճեմարանը, «Կիլիկեան» դպրոցը եւ Ազգային պատասպարանը, ուստի յատկացուած նիւթական աջակցութեան մէկ մասը պիտի ուղղուի այդ հաստատութիւններու վերանորոգման:

Այս հրատապ մարդասիրական ծրագիրը կ'իրականացուի Սուրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան հետ սերտ համագործակցութեամբ, ինչպէս նաեւ Սուրիոյ մէջ գործող եկեղեցական եւ համայնքային այլ կառոյցներու ներգրաւածութեամբ:

Հաղորդագրութիւնը անելուց, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը իր գորակցութիւնը կը յայտնէ երկրաշարժէ տուժածներուն եւ հաւատարիմ մնալով իր համահայկական առաքելութեան, ամուր կանգնած է սուրիահայութեան կողքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՈՐՈՆՈՂԱԾՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ՓԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՏԱԿԷՆ ԴՈՒՄ ԲԵՐԱՄ 7 ԴԻՍԿՆԵՐ

Հայաստանի որոնողափրկարարական խումբը 8 Փետրուարէն սկսաւ Հալէպի մէջ իր աշխատանքներուն:

«Շաար» արաբաբնակ թաղամասին մէջ փուլ եկած շէնքերու փլատակներուն տակէն մինչեւ հիմա խումբը դուրս բերած է 7 գոհի դիակ:

Հայաստանի խումբը օժտուած է թեքնիք ամբողջական պատրաստուածութեամբ եւ մասնագետներով:

Շրջանին մէջ որոնողական աշխատանքներ տարած են նաեւ իրանեան եւ սուրիական խումբերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՕՂԱՆԱԸ ՀԱՍՍԱԻ ՀԱԼԷՊԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՂԱԿԱՅԱՆ

Հինգշաբթի, 9 Փետրուարի առաւօտուն Հայաստանի Հանրապետութեան Սուրիոյ աղէտեալ ժողովուրդին ուղարկուած մարդասիրական օժանդակութեան երկրորդ օղանալը հասաւ Հալէպի միջազգային օդակայան:

Օժանդակութիւնը, որ ստանձնեց Սուրիական Կարմիր Մահիկ կազմակերպութիւնը կ'ընդգրկէր սննդեղէն եւ դեղորայք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐՈՆՈՂԱԾՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԱՅՅԵԼԵՅՍ ՍՐԲ. ԶԱՌԱՄՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ

Շաբաթ, 11 Փետրուար 2023-ի միջօրէին, Հայաստանէն ժամանած որոնողափրկարարական խումբը այցելեց Սրբ. Զառանկից Մանկանց Մայր եկեղեցի, աղօթելու եւ Սրբազան Հօր օրհնութիւնները ստանալու, գլխաւորութեամբ՝ Հայաստանի Հանրապետութեան Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական-Հիւպատոս մեծարգոյ Բաբգէն Պատալեանի:

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան եկեղեցւոյ շրջափակէն ներս իր հայրական օրհնութիւնները փոխանցեց մարդասիրական առաքելութեամբ Հալէպ ժամանած որոնողափրկարարական խումբի անդամներուն, իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց անոնց եւ Ամենակալին պաշտպանութիւնը հայցեց:

Այնուհետեւ, խումբի մասնագետները եկեղեցւոյ մէջ շրջազայելով ծանօթացան եկեղեցւոյ պատմականին եւ սրբապատկերներու պատմական արժեքին, ապա «Տերունական Աղօթք»-ը արտասանեցին եւ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով հայցեցին, որ իրենց առաքելութիւնը յաջողութեամբ ամբողջանայ:

«ԻՆՉՊԷՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԻ ԵՐԿՐԱՆՄԱՐԺԵՆ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԷՆ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ԺՈՂՎՐԱՅԻՆ ՀԱՆՊԻՊՈՒՄ-ՂԱՍԱՆՍՕՍՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Շաբաթ, 11 Փետրուար 2023-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, Հայաստանի Հանրապետութեան որոնողափրկարարական խումբի Հալէպ ժամանած մասնագետները ժողովրդային հանդիպում-դասախօսութիւն ունեցան «Ինչպէ՞ս պաշտպանուիլ երկրաշարժէն եւ անոր հետեւանքներէն» խորագիրով, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:

Տիկ. Չեփիւռ Բէխեան բարի գալուստ մաղթելով ՀՀ որոնողափրկարարական խումբի մասնագետներուն, հրաւիրեց խումբի ներկայացուցիչները շահեկան դասախօսութեամբ երկրաշարժի հետեւանքներէն պաշտպանուելու մասին տեղեկութիւններ փոխանցելու եւ ժողովուրդի գաւազները լուսաբանելու:

Ազգ. երեսփոխանական...

Սկիզբ՝ էջ 1

զեկուցաբերներու կողմէ զեկույցներ՝ երկրաշարժի պատճառով թեմիս տարածքին յառաջացած իրավիճակներուն եւ իրագործուած անմիջական աշխատանքներուն մասին:

Ժողովը քննարկեց ստեղծուած աղետալի իրավիճակին բազմաբնոյթ կարիքները ու լիազօրեց Ազգ. Վարչութիւնը՝ անմիջապէս բաւարարելու անօթեան ընտանիքներուն կարիքները, ինչպէս նաեւ սննդամթերքի եւ առողջապահական խնդիրներուն լուծումներու յաւելեալ միջոցներ որոնելու:

Երեսփոխանական ժողովը նաեւ յանձնարարեց Ազգային Վարչութեան իրականացնել ամբողջական տեղեկահաւաք՝ երկրաշարժի պատճառով ժողովուրդին մօտ տարաբնոյթ եւ նորաստեղծ կարիքները վաւերագրելու եւ ազգային կառոյցներու իրավիճակը ուսումնասիրելու, յառաջացնելով համապատասխան մարմիններ, որոնք պիտի մշակեն ծրագիրներ եւ ապահովեն նիւթական միջոցներ, օգտուելով Սուրիոյ, Սփիւռքի, Հայաստանի Հանրապետութեան, միջազգային կազմակերպութիւններու, ինչպէս նաեւ այլ կողմերու ընձեռած հնարաւորութիւններէ:

Ժողովը շեշտադրեց տարուած բոլոր աշխատանքներուն մասին մեր մամուլով շարունակել անարկայական լրատուութիւնը՝ ժողովուրդը իրագրէ դարձնելու մարդասիրական լայնամասշտապ, բազմաբնոյթ եւ ծաւալուն աշխատանքներուն:

Անդրադառնալով Սուրիական Հայրենիքին վրայ պարտադրուած պատժամիջոցներուն՝ ժողովս հաստատեց թէ հարկ է անյապաղ կոչ ուղղել՝ վերացնելու այդ պատժամիջոցները, որոնք անմարդկայնօրէն կը սաստկացնեն աղետին գործած աւերը:

Ժողովս շնորհակալական խօսք արձանագրեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Սուրիոյ Վսեմաշուք Նախագահ տոքթ. Պաշշար ալ-Ասատին եւ բոլոր այն կողմերուն ու ազգի կամաւոր զաւակներուն եւ երիտասարդներուն, որոնք աղետի առաջին ժամերէն իսկ զօրակցեցան ժողովուրդին եւ անոր ցաւը թեթեւուցին:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԱԹՈՂԻԿՈՍ ՃԱՆԿՅՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏԵՆ ՍՈՒԻՌՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇՇԱՐ ԱԼ-ԱՍԱՏԻՆ

Երեքշաբթի, 7 Փետրուար 2023-ին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Պաշշար ալ-Ասատին յղած ցաւակցագիրով, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, իր խորագգաց վշտակցութիւնը կը յայտնէ Սուրիան հարուածած ծանր երկրաշարժին հետեւանքով ինկած զոհերուն, ինչպէս նաեւ զօրակցութիւն՝ վերապրողներուն:



Վեհափառ Հայրապետը նամակին մէջ կը գրէ, որ կակիծով կը հետեւի աղետին պատճառած ահաւոր աւերին եւ պատրաստակամութիւն կը յայտնէ օգնութեան ձեռք երկարելու Սուրիոյ ժողովուրդին: Նամակի աւարտին, Նորին Ս. Օծութիւնը աղօթք կը բարձրացնէ առ Աստուած, որպէսզի աղետի զոհերուն հոգիները լուսաւորէ, շուտափոյթ ապաքինում պարգեւէ վիրաւորներուն եւ մխիթարութիւն՝ Սուրիոյ ժողովուրդին:


ՀԱԼԵՂԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂՈՆՆԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՅԻՆԵՐ ԱՊԱՏՏԱՆԱԾ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԸ



Հալեղի եկեղեցիներուն եւ ազգային կեդրոններուն մէջ ապաստանած հայորդիներու սնունդի մատակարարում կատարեցին ակումբի կամաւոր հայ երիտասարդները: Անոնք շտապ օգնութեան բոլոր աշխատանքներուն մասնակից դարձան:

ԵՐԿՐԱՇԱՐՄԵՆ ՏՈՒԺԱԾ Է ԵԱԳՈՒՂԻԷԻ Ս. ԱՆՆԱ ԵԿԵՂԵՅԻՆ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը խոր ցաւով իմացաւ Եագուայի գիւղի հսկայ աւերներուն մասին, որոնք շարքին նաեւ Ս. Աննա հայ եկեղեցին: Ս. Աննան պատմական եկեղեցի ըլլալով՝ մեր ժողովուրդին համար դարձած է ուխտատեղի: Ստորեւ կը ներկայացնենք քանդումներէն պատկերներ:



Վեհափառ Հայրապետը երէկ եւ այսօր կապ հաստատեց Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Գեղշ. Տ. Մակար եպս. Ազգարեանի եւ համայնքային պատասխանատուներու հետ եւ մօտէն հետեւեցաւ երկրաշարժին պատճառով դժուարութեան մատնուած մեր ժողովուրդի զաւակներու իրավիճակին: Մեր պատասխանատուները յատուկ հոգածութիւն ու խնամք կը ցուցաբերեն եօթը կեդրոններու մէջ ապաստանած մեր հայորդիներուն՝ անոնց հայթայթելով անհրաժեշտ կարիքներ: Այս առիթով մեր համայնքի պատասխանատուները Նորին Ս. Օծութեան փոխանցեցին, թէ յատուկ յանձնախումբի ճամբով սկիզբ առած է վնասուած տուններու արձանագրութեան աշխատանքը:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՎՆԱՍՆԵՐՈՒ ՃԱՆԿԱԳՐՄԱՆ ԿՈՉ



Բերիոյ Հայոց Թեմի Հալեղի բնակիչներուն յայտարարուեցաւ ներկայանալ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահ Չորեքշաբթի, 8 Փետրուարէն, ամէն օր, առաւօտեան ժամը 10:00-էն 2:00 սկսեալ, իրենց հետ ունենալով անձնաթուղթ, ընտանեկան տեսրակ, բնակարանի սեփականատիրութեան փաստաթուղթ, երկրաշարժին հետեւանքով բնակարանի կրած վնասներու լուսանկարներ՝ ցանկագրելու իրենց բնակարաններուն կրած վնասները:

Դիան Ազգ. Առաջնորդարանի

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ՍՈՒԻՌՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ԶՕՐԱԿՅՈՂ ՀԱԽԱՔԻՆ

Ուրբաթ, 10 Փետրուար 2023-ին, Պէրիոյ մէջ տեղի ունեցաւ Սուրիոյ ժողովուրդին զօրակցող եւ արգելափակումները դատապարտող հաւաք մը, կազմակերպութեամբ Լիբանանի ազգային տեղեկատուական կառոյցին եւ իսլամ կրօնական հաստատութիւններուն: Հաւաքին ներկայ էին Լիբանանի կրօնական եւ պետական բարձրաստիճան պատասխանատուներ, քաղաքական գործիչներ, ընկերային ծառայողներ եւ իսլամ կրօնական հաստատութիւններու ներկայացուցիչներ:



ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, հաւաքին ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան եւ Հոգշ. Տ. Առաքել Աբր. Գատեհեան: Այս առիթով, Սարգիս Վարդապետը արարեցին լեզուով արտասանեց զօրակցական խօսք եւ ցաւակցութիւն յայտնեց երկրաշարժի զոհերու ընտանիքներուն ու շուտափոյթ ապաքինում վիրաւորներուն:

ԼԱԹԱՔԻՈՅ ԶՐԻՍԱՌՆԵԱՅ ՀԱՍՏՆՔՆԵՐԸ ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՐՈԹԵՅԻՆ



Ուրբաթ, 10 Փետրուար 2023-ի երեկոյեան ժամը 19:00-ին, Լաթաքիոյ եկեղեցիներու հոգեւոր պետերը եւ հոգեւոր հովիւներն ու պատասխանատուները իրենց համայնքներու հաւատացեալներով համախմբուեցան Լաթաքիոյ Լատինաց եկեղեցւոյ կամարներուն ներքոյ, միասնաբար աղօթելու բարձրեալին աշխարհի խաղաղութեան եւ ապահովութեան համար:

Հոգեւոր հայրերը կատարեցին հոգեւոր
Շար.՝ էջ 5 ➔

Սկզբ՝ էջ 4

խորհրդածություններ, արտասանեցին աղօթքներ և Սաղմոսներ ընթերցեցին:

Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ ծովափնայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Բիւլ. Զեօշկերեան իր մասնակցութիւնը բերաւ ընթերցելով Սաղ. 22 «Տէրը իմ հովիւս է»:

Կազմուեցաւ խառն երգչախումբ բոլոր համայնքներու եկեղեցական դպրաց դասերու ներկայացուցիչներով, Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրաց-դասէն մասնակցութիւն բերաւ Զարէն Պետրոս Տերմենճեան, մեներգելով «Տէր Ողորմիա»-ն:

ԼԱԹԱՔԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԱՆԸ ՊԱՏՐԱՏՈՒԹՅԱՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ

Լաթաքիոյ մէջ արձանագրուած յետցնցումային երկրաշարժին հետեւանքով հայ ընտանիքները սկսան ներկայանալ Ս. Աստուածածին եկեղեցի:



Թաղականութիւնը սրահը օժտեց բոլոր յարմարութիւններով, որպէսզի ընդունի հայ ընտանիքները:

Թաղականութիւնը արձանագրեց նաեւ հայ ընտանիքներու վնասուած բնակարանները, որպէսզի սերտուին բնակարանային վնասներն ու վերականգնումի աշխատանքները կատարուին, ինչպէս նաեւ ապաստարաններ տրամադրուեցան փլուզման վտանգի տակ գտնուող բնակարաններու տերերուն:

Նոյն օրը Յոմի հարաւային գիւղէն սկաւտական պատուիրակութիւն մը վարդապետ Ապտալլա Զազահի ղեկավարութեամբ գիւղէն նուիրահաւաք կատարած եւ սննդամթերք ու հանդերձ հասցուցած է եկեղեցւոյ սրահ, նկատի առած որ Լաթաքիոյ բնակչութիւնը Յոմի բնակչութեան չափ եւ շատ անելի մեծ վնասներ կրած է:

Լաթաքիոյ մէջ երկրաշարժէն ետք կարգ մը շէքեր փոլ կու գան: Նման շէքերու հայ ընտանիքները լքեցին բնակարաններն ու ներկայացան իրենց հարազատներուն մօտ կամ եկեղեցւոյ սրահ:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՐԿՐԱՇԱՐՇԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՐՄԻՆ

Սուրիոյ երկրաշարժին հետեւանքով աղէտահար դարձած սուրիահայութեան շտապ կարիքները ապահովելու նպատակով, Բերիոյ Յայոց Թեմի Ազգային Իշխանութիւնը կեդրոնական մարմին մը յառաջացուց՝ Բերիոյ Յայոց Թեմի երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմին անունով:



Յառաջացած մարմինը, Երեքշաբթի, 14 Փետրուար 2023-ին, կէսօրէ ետք ժամը 5:00-ին, իր անդրանիկ նիստը գումարեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ, նախագահութեամբ Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, որուն կ'ընկերակցէին Ազգ. Վարչութեան ատենապետ մէթր Սունայուլ Սունայուլեան եւ Յարաբերական Մարմինի անդամ Վրեժ Եագուպեան:

Սրբազան Յայրը աղօթքով եւ իր օրհնութիւնը փոխանցելով բացումը կատարեց նիստին եւ իմաստութիւն ու յաջողութիւն մաղթեց յառաջացած մարմինի անդամներուն:

Յարաբերական Մարմինի անդամ Վրեժ Եագուպեան խօսք անելով յայտնեց, թէ մարմինը պիտի գործէ գլխաւորութեամբ Յարութ Յայրապետեանի եւ խնդրեց, որ թափանցիկ եւ բժախնդիր ընթացք ունենայ մարմինին գործունեութիւնը:

Մարմինին մաս կը կազմեն Ազգ. Վարչութեան երկու ներկայացուցիչներ, թեմի Տնտեսական Խորհուրդի, Կալուածոց Յոգաբարձութեան եւ ՍՕ Խաչի ներկայացուցիչներ:

Արդէն իսկ երկրաչափական յանձնախումբ մը յառաջացած է, որ կը գործակցի Յալէպի երկրաչափական սենտիքայի մասնագետ երկրաչափներու հետ: Յանձնախումբը կ'այցելէ վնասուած բնակարանները եւ արժեւորումներ կը կատարէ: Մինչ օրս յանձնախումբը այցելած է ազգային կալուածներ, դպրոցներ, եկեղեցիներ, ակումբներ, ազգային շէքեր եւ համապատասխան վնասներու արժեւորումներ կատարած է: Մինչ օրս յանձնախումբին կատարուած է 375 դիմում, որոնցմէ 200 դիմումի ի պատասխան յանձնախումբը այցելած է բնակարաններ եւ արժեւորած է անոնց վնասները:

Կոչ կ'ուղղենք բոլոր հայորդիներուն, որոնց բնակարանները երկրաշարժին հետեւանքով վնասի ենթարկուած են դիմելու յանձնախումբի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս գտնուող գրասենեակը, իրենց հետ ունենալով փաստաթուղթեր:

Վնասները սերտելէ ետք, յաջորդ հանգրուանով բոլոր սերտուած բնակարանները համապատասխան շինարարական աշխատանքի պիտի ենթարկուին:

ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԽՈՒՄԻԱՅԷՆ ԺԱՄԱՆԱԾ ՀԱՄԱՆԻՍԱՐՀԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԱՐՄԱՆԵՂՍ. ՆԱԴԱՆՏԵԱՆԸ

Երեքշաբթի, 14 Փետրուար 2023-ին, միջօրէի ժամը 12:00-ին, Յալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Սուրենեան» դահլիճէն ներս, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան ընդունեց Ռուսիայէն ժամանած «Համաշխարհային Քրիստոնեական Միութեան» պատասխանատուները, որոնք մարդասիրական օժանդակութեան նպատակով եկած էին Յալէպ եւ կարգ մը կեդրոններու իրենց զօրակցութեան



կողմին նաեւ մարդասիրական օժանդակութիւն մատուցելու: Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ Յոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Արժ. Տ. Չարեհ Բիւլ, Շաքարեան եւ Թեմի Յարաբերական Մարմինի անդամը:

Միութեան պատասխանատուն իր սրտի խօսքը արտասանեց, շնորհակալութիւն յայտնելով Սրբազան Յօր՝ իր ջերմ ընդունելութեան համար եւ ամփոփ գիծերու մէջ ներկայացուց իրենց կատարած աշխատանքներն ու ծառայութիւնները:

Մակար Սրբազան բարի գալուստ մաղթեց օժանդակութիւն բերող խումբին Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկէն ներս եւ մեծապէս գնահատեց միութեան կատարած յոյժ կարեւոր ծառայութիւնը, յատկապէս ներկայ պայմաններուն եւ աղէտալի իրավիճակներու մէջ գտնուող տառապեալներուն, յայտնելով, որ այս ծառայութիւնը ո՛չ միայն բարիք է, այլեւ՝ օրհնութիւն, զօրակցութիւն, քաջալերանք եւ գօտեալդում, զայն որակելով գործնական մարմնաւորումը աստուածասիրութեան եւ մարդասիրութեան:

Այս առիթով, Թեմիս Առաջնորդ Սրբազան Յայրը ընդունեց նաեւ Դամասկոսէն Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանի զօրակցական այցելութիւնը, որ իր ցաւակցութիւնը յայտնեց Սրբազան Յօր՝ Բերիոյ Յայոց Թեմի տարածքին երկրաշարժին հետեւանքով յառաջացած աղէտին եւ կորուստներուն համար:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՆՏԵՒԱՆՔՈՎ՝ ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ

Երկուշաբթի, 6 Փետրուար 2023-ին, վաղ առաւօտեան ժամը 4:15-ին, երկու ահաւոր երկրաշարժներ ցնցեցին Սուրիան, ի մասնաւորի Զալէպ, Լաթաքիա եւ Իտլիպ նահանգները: Շուրջ երկու վայրկեաններու վրայ երկարող երկրաշարժները 7,8 եւ 6,4 ռիխթըր ուժգնութեամբ սարսափեցուցին ժողովուրդը: Մարդկային ու նիւթական վնասներ արձանագրուեցան:

Բերիոյ Զայոց Թեմի Ազգ. Վարչութիւնը անմիջապէս ձեռնարկեց մեր ժողովուրդին ապաստան ապահովելու աշխատանքին եւ բաց յայտարարեց ազգային բոլոր կեդրոնները: Ժողովուրդի ընդունման եւ խնամատարութեան աշխատանքը վստահեցաւ իւրաքանչիւր կեդրոնին համար նշանակուած պատասխանատուին եւ ակումբի հայ տղոց



աշխատակազմին, իսկ «Գանձասար» պաշտօնաթերթի եւ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդութեան դիմատետրի էջերուն միջոցաւ յայտարարեց Զալէպի գանձան շրջաններուն մէջ հայկական կեդրոններու ապաստարանները, հետեւեալ մանրամասնութեամբ՝

Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի «Չարեհեան սրահ»

Արամ Մանուկեան ժողովրդային Տան «Սպիտակ» եւ «Նիւ Սպիտակ» սրահներ

Ս. Աստուածածին եկեղեցին իր երկու ներքնասրահներով

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ ներքնասրահը

«Ս. Նալպատեան» սրահ «Նախկին Տիգրանեան»

ԶՄԸՄ-ի Ընտանեկան Պարտեզ

Իսկ կարիքներու պարագային հեռաձայնային հաղորդակցութիւն հաստատելու հեռանկարով ներկայացուեցաւ բջիջային երեք հեռաձայններու թիւեր:

Այդ օրէն մինչեւ օրս յայտարարուած է արտակարգ իրավիճակ: Նշանակուեցան կեդրոններու պատասխանատուներ եւ աշխատակազմ՝ համակարգելու համար կարիքները եւ անոր համապատասխան ընթացիկ աշխատանքները:



Ակումբի հայ տղաքը շարժելու դժուարութիւններ ունեցող անհատները տեղափոխեցին դէպի ապահով կացարաններ, հիւանդներ փոխադրեցին հիւանդանոցներ, հսկեցին կեդրոններուն մինչեւ առաւօտեան ժամեր, ապահովեցին հարկ եղած պիտոյքները, պատրաստեցին ուտեստեղէններ եւ տրամադրեցին գանոնք պատասխարեալներուն:

Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական խորհուրդը իր կարգին մեր ժողովուրդի գաւակներուն համար եկեղեցւոյ «Գանձասար» սրահը որպէս ապաստարան տրամադրեց եւ հոգաց ժողովուրդի բոլոր կարիքները:

Նշենք, թէ ապաստարանները օժտուած են կենցաղային բոլոր յարմարութիւններով եւ ապաստանեալ ժողովուրդին կը տրամադրուի

սնունդ եւ հանգստաւտ պայմաններ:

Վարչութիւնս յառաջացուց Բերիոյ Զայոց Թեմի երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմին, որուն պիտի վստահուի երկրաշարժի հետեւանքով մեր ժողովուրդի կարիքներուն համապատասխան աշխատանք ծաւալել, լուծումներ առաջադրել ու անոնց ֆինանսաւորող կողմերը ապահովել: Ինչպէս նաեւ երկրաշարժի արդիւնքով վնասուած բնակարաններու վնասները ուսումնասիրող ու արձանագրութիւն պահող յանձնախումբ մը՝ բաղկացած մասնագետ հինգ երկրաչափերէ, որոնցմէ երկուքը օտար են:

Բնակարաններու վնասներու ցանկագրման համար յայտարարութեամբ յորդորեց ժողովուրդը ներկայանալու Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահ Զորեքշաբթի, 8 Փետրուար 2023-էն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կեսօրուան ժամը 2:00, իր հետ ունենալով փաստաթուղթեր (անձնաթուղթ, ընտանեկան տեսրակ, բնակարանի սեփականատիրութեան փաստաթուղթ, երկրաշարժին հետեւանքով բնակարանի կրած վնասներու լուսանկարներ):

Յանձնախումբը իր առաջին նիստը գումարեց Երեքշաբթի, 7 Փետրուար 2023-ին եւ ծրագրեց աշխատանքները: Զորեքշաբթի, 8 Փետրուար 2023-ին այցելեց Նոր Գիւղ շրջանի ազգապատկան կառոյցները եւ ստուգեց վնասները: Նշենք, թէ մեր կառոյցները բաւական չափով ամուր են եւ արձանագրուած վնասները՝ թեթեւ: Աւելի անհրաժեշտ նկատելով ժողովուրդի գաւակներու բնակարաններուն վնասներու ուսումնասիրութիւնը, ընթացք տուաւ ժողովուրդի դիմումներուն, որոնց արձանագրութիւնները կատարուեցան մեր երիտասարդներուն կողմէ: Դիմումնագիրները կը սերտուին մասնագետներու կողմէ, ապա հետախուզական աշխատանքը ընթացք կ'առնէ: Յայտարարութեամբ ներկայացուած դիմումնագիրներէն 45 բնակարաններ անբնակելի են:

Վարչութիւնս ճիգ չ'իսնայեց նստավայրի մէջ գործող բարեսիրական կողմերու հետ կապ հաստատելու, որուն որպէս արդիւնք համայնքի գաւակներուն տրամադրուեցան հաց, ուտեստեղէն, սննդակողով, դեղորայք, սպունգներ, ծածկոցներ, վառելանիւթ, կաթ եւ հանդերձանք: Զամագործակցութիւն կատարուեցաւ հետեւեալ կողմերուն հետ.-

الأمانة السورية للتنمية, SOS, Hope Center, Together, One Two Three, Միջին Արեւելքի եկեղեցիներ, Յոյն Կաթողիկէ համայնքի սկաւտութիւն, ՍՕ Խաչ եւ ալ-ճալաա ակումբ:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՏԱՓԱՌ ԶԱՅՐԱԳԵՏԻՆ ԶՕՐԱՎՅՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԵԱՆ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետը Սուրիոյ հայ համայնքի հոգեւոր եւ աշխարհական պատասխանատուներուն հետ մնայուն կապի մէջ եղաւ, մօտէն հետեւեցաւ երկրաշարժին յառաջացուցած վնասներուն, աւերներուն եւ իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց:

Նորին Սրբութիւնը գումար մը յատկացուց Զալէպի հայութեան ապաստան կեդրոններուն մէջ ապաստանեալ մեր ժողովուրդի գաւակներուն սննդաբաշխումի աշխատանքներուն համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Զայրապետը յատուկ նամակ յղեց Սուրիոյ Զանրապետութեան Վսեմաշուք Նախագահ տոբթ. Պաշտար ալ-Ասատին՝ Սուրիոյ ժողովուրդին իր ցաւակցութիւնն ու զօրակցութիւնը արտայայտելով:

ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՄԻ ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԸ. Տ ՄԱԿԱՐ ՍՐԲ. ԵՊՍ. ԱՅԳԱՐԵԱՆԻ ԶՕՐԱՎՅԱՎԱՆ ԱՅՅԵՆԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- Երկուշաբթի, 6 Փետրուար 2023-ին, Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգաբեանի տնօրինումով եւ



թելադրութեամբ, Զոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան այցելեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, Ս. Աստուածածին եկեղեցի եւ ներքնասրահը, «Ս.

Սկիզբ՝ էջ 6

Նալպանտեան» սրահ (նախկին Տիգրանեան), ՀՄԸՄ-ի ընտանեկան պարտեզ եւ Կրթասիրացի կառույցը, ուր հայորդիները երկրաշարժի հետեւանքով ապաստան գտած էին:

- Թեմակալ Առաջնորդը վերադառնալով Եգիպտոսի մէջ կայացած Կաթողիկէ եւ Արեւելեան Ուղղափառ քոյր եկեղեցիներու միջեւ



աստուածաբանական երկխօսութեան 19-րդ լիակատար ժողովէն, զօրակցական այցելութիւններ տուաւ հետեւեալ պատկերով.-

1- Երեքշաբթի, 7 Փետրուար 2023-ին, երկրաշարժէն փրկուած եւ մարմնական վնասներ կրած հայորդիներուն «Ֆրիշօ» հիւանդանոցէն ներս, ընկերակցութեամբ՝ Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեանի, Սուրիոյ



Խորհրդարանի Երեսփոխան եւ Ազգային Երեսփոխանական ժողովի ատենապետ տիար Ժիրայր Րէիսեանի եւ Յարաբերական Մարմնի անդամ տիար Վրէժ Եագուպեանի:

2- Երեքշաբթի, 7 Փետրուար 2023-ին, Ազգային կեդրոններէն ներս ապաստանած հայորդիներուն, որոնք համախմբուած էին երկրաշարժի վտանգներէն պաշտպանուելու համար:



3- Չորեքշաբթի, 8 Փետրուար 2023-ին, ֆիզիքական վնասներ կրած հայորդիներուն, «Ֆրիշօ» հիւանդանոցէն ներս, ընկերակցութեամբ՝ Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեանի, Սուրիոյ Խորհրդարանի Երեսփոխան եւ Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետ տիար Ժիրայր Րէիսեանի, Յարաբերական Մարմնի անդամ տիար Վրէժ Եագուպեանի եւ Ազգային Վարչութեան անդամ տիար Գուրգէն Գալուստեանի:

4- Չորեքշաբթի, 8 Փետրուար 2023-ին, Հայ Ծերանոցի տարեցներուն, ընկերակցութեամբ՝ Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեանի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՎՈՐԴԻՆ

- Չորեքշաբթի, 8 Փետրուար 2023-ին, Ազգային Առաջնորդարանէն ներս, Առաջնորդ Սրբազան Հօր այցելեցին Հայաստանի Հանրապետութեան Սուրիոյ դեսպան մեծարգոյ Տիգրան Գեորգեան եւ ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական- Հիւպատոս մեծարգոյ Բարգէն

Պատալեան:

Դեսպանը Հալէպ ժամանած էր ՀՀ-ի կողմէ ուղարկուած Շտապ Մարմնի փրկարար մասնագիտական խումբի 29 մասնագետները եւ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան ներկայացուցիչ



մարդասիրական օժանդակութեան օղակաւ ընդունելու: Պարոն դեսպանը հաստատեց, թէ երկու պետութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող եղբայրական սերն ու գործակցութիւնը պիտի շարունակուին: Հալէպի միջազգային օդակայան ժամանեց Շտապ Մարմնի մասնագիտական օժանդակութեան օղակաւ՝ երկրաշարժի ենթակայ շրջաններէն ներս



փրկագործական աշխատանքի օժանդակութեան եւ կարիքաւոր ժողովուրդին օգտակար դառնալու համար:

Հայաստանի Հանրապետութիւնը Սուրիոյ աղէտեալ ժողովուրդին ուղարկեց մարդասիրական օժանդակութեան օղակաւ: Օժանդակութիւնը ստանձնեց Սուրիական Կարմիր Մահիկ կազմակերպութիւնը:

ԵՐԿՐԱՇԱՐՄԻ ԱՐԴԻՆՔ ՄԱՐԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐ ԵՒ ՎՆԱՍՆԵՐ

Աղէտալի երկրաշարժին հետեւանքով սուրիահայութիւնը ունեցաւ երկու զոհեր եւ տասնեակ մը վիրաւորներ:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒՆՆԵՐՈՒ ԵՐԿՐԱՇԱՐՄԻ ԱՐԴԻՆՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ՎՆԱՍՆԵՐ

Ազգային Վարչութիւնը հետամուտ եղաւ շրջաններու իրավիճակին ու հարկ եղած թելադրանքներն ու ուղղութիւնը փոխանցեց շրջանի մարմիններուն:

Երկրաշարժի արդիւնք մասնակի վնասներու ենթարկուած եւ ազգապատկան հետեւեալ կեդրոնները.-

- 1- Սրբոց Զատանից Մանկանց Մայր Եկեղեցւոյ զանգակատունը
- 2- Ազգային Զարէն Եփփէ ճեմարանը
- 3- Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին:

Լուրջ վնասներու ենթարկուած են՝

- 1- Զեսայի Ս. Աստուածածին Եկեղեցին
- 2- Լաթաքիոյ Ազգ. Սրբ. Նահատակաց վարժարանը
- 3- Եագուպիէի Ս. Աննա Եկեղեցին, ըստ անուղղակիօրէն հասած տեղեկութիւններու:

Ազգ. Վարչութիւնը ջերմապէս շնորհակալութիւն կը յայտնէ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Սուրիոյ Պետութեան եւ Սուրիոյ Վսեմաշուք Նախագահ Տոքթ. Պաշար ալ-Ասատին, Հայաստանի Հանրապետութեան, բոլոր բարեսիրական եւ մարդասիրական հաստատութիւններուն եւ արտերկրի կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք զօրակցելով մեզի աղէտալի երկրաշարժի արհաւիրքին մէջ մեր ցաւը թեթեւցուցին:

Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութիւն

Պրիսմակետ

ԱՆՁՐԵՒՆ ԵՒ ԿԱՐԿՈՒՄՆԻՆ ՄԻՋԵՒ



Մարուշ Երամյան

-Երբ միաժամանակ մարմնիդ երկու տարբեր տեղերը ցաւ գգաս, օրինակ ոտքդ կը ցաւի 65 % եւ ուսդ կը ցաւի 75 %, ո՞ր ցաւը աւելի կը գգաս: -Անշո՛ւշտ աւելի մեծ ցաւը կը գգաս՝ ուսիդ ցաւը:

Սուրիոյ պատերազմին ամառըն տարին էր, ամառըն օրերը. Տակաւին չէինք հասկնար թէ ինչո՞ւ այս չարիքը կը թափի մեր գլխուն, ինչո՞ւ այսքան ազնիւ, աշխատասեր եւ խաղաղասեր ժողովուրդ մը պետք է այս վայրագութեամբ տանջահար ըլլայ ...

Ամէն գիշեր գլուխս բարձին կը դնէի եւ տեսակ մը քաշուելով կը սկսէի շուրջիններուս համար բաներ խնդրել՝ մէկուն ամողջութիւն, որուն տունը որ վտանգաւոր գօտիններու մէջ էր՝ ապահովութիւն, ուրիշի մը՝ ընտանիքը պահելու միջոցներ, չորրորդի մը դուրսէն գալիք դեղորայք եւ այլն ... յետոյ կը լռէի, որովհետեւ կը քաշուէի այդքան բան ուզել-խնդրելու:

Երբ այս գգացումս կ'արտայայտէի, իսկամ դրացուհիներու մէկը ըսաւ. «Երբե՛ք քաշուելու չես, մեր Տերը ողորմած է եւ անառածեմն, որքան ուզես, կու տայ ...»:



Այն ատեն էր որ անդրադարձայ թէ որքա՛ն տարբեր են մեր Աստուածները. Մերը ողորմած է եւ գթած, կը խնդրենք, երբեմն կու տայ, երբեմն ոչ, բայց երբե՛ք չենք պահանջեր. Հետեւաբար կը գոհանանք եւ փառք կու տանք. Մինչ իրենք կը պահանջեն ուղղակի, եւ որովհետեւ իրենց Աստուածը պատժող է, իրենք վախ կ'ապրին եւ այդ վախը կը փոխադրեն իրենց շուրջիններուն վրայ:

Սորված են վախնալ իրենց Աստուածէն, հետեւաբար՝ նաեւ վախցնել իրենց շուրջինները ...

Ահա թէ ինչո՞ւ հոս ենք: Հիմա ճիշդ նոյնը կ'ընեն Արցախի մէջ՝ շրջափակեր են այդքան կին ու երեխայ եւ նախ վախով կը տկարացնեն զանոնք, որ յետոյ ...

Բայց ճիշդ նոյն ոճը չէ՞, որ տեսեր էինք ասկէ դար մը եւ աւելի ամառ: Տեսեր էինք, բայց չենք սորված անոր հետ վարուելու կերպը:

Իսկ իրենք, երբ կը տեսնեն թէ իրենց ոճը շա՛տ դիւրաւ արդիւնք կու տայ, կը շարունակեն, աւելի եւ աւելի լկտիանալով ...

Բայց ո՞ր մնացին պատիժ եւ հատուցումը. ո՞ր է այն վայրը, ուր տառապեալները պիտի մխիթարուին եւ տանջուածները հանգիստ պիտի գտնեն:

Ինք տարի ամառ դիմատետրին գրեր եմ. «Տխրութիւնը իմաստութիւն կու տայ, իսկ ուրախութիւնը՝ պայծառութիւն հոգիին: Հիմա ազգովին իմաստուն դարձանք արդէն»:

Դարձա՞նք. թերեւս այո՛, բայց այս անգամ բնութիւնը մեզի հանգիստ չտուաւ այդ «թերեւս»ը վերանայելու:

«Տխրութենէն եւ Ցաւէն ծնած այսքան իմաստութեան պետք չունինք արդէն ... Ո՞ր է պայծառութիւնը»:

Սիրելի բանաստեղծուհի Երան Գ. ը սակայն կ'ըսէ. «Եթէ իմաստուն դարձած ըլլայինք, նոյն սխալները չէինք կրկնէր խորենացիի օրերէն մինչեւ հիմա»:

Այս ալ ճիշդ է, բայց բնութիւնը ...

Եւ ոչ միայն բնութիւնը, այլ ամբողջ աշխարհը, որ կրկին խուլցած է. «Վերցուցէ՛ք պատիժները Սուրիոյ վրայէն այս ծանր օրերուն» կ'ըսենք մենք եւ մեզի հետ սրտցաւ մէկ-երկու կազմակերպութիւն: Բայց լսողը ո՞վ:

Իսկ օգնութիւնը բառացիօրէն կը հոսի դէպի ... Թուրքիա: Հո՞ս ալ դեր ունինք մենք եւ մեր չիմաստութիւնը:

Թերեւս այո՛:

Կը տեսնե՞ք, արդէն սկսայ կասկածիլ մտածելու եւ տրամաբանելու կարողութեանս վրայ ...

Բայց դէպքերն ալ թոյլ չեն տար, որ տրամաբանութիւնը իր ճամբով ընթանայ, ամանց շփոթելու, որովհետեւ ի՞նչ մտածես, երբ կը լսես, որ Հայաստանէն փրկարար ջոկատներ հասեր են Ատիյաման, իրենց օգնութիւնը մատուցելու երկրաշարժէն տուժածներուն, իսկ

շնորհակալութիւնը ստացեր է ... Ատրպեյճանի նախագահը. ի՞նչ մտածես.

Յամենայն դէպս՝ երկրաշարժը կատարուած իրականութիւն է եւ ոչ՝ մոծաւանջ, որմէ բոլորս ալ կը կարծենք արթննալ, ինչպէս կը կարծէինք Սուրիոյ պատերազմի ամառըն օրերուն, Հայաստանի երկրաշարժի օրերուն, անկէ շատ ամառ Հիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն եւ ամենէն վերջը՝ Արցախի շրջափակումին, որուն համար իրանցի պոլկըր Փույա Յոսէյնի կը գրէ իր էջին վրայ.

«Ի հարկէ մարդկային անմեծ կեանք ամէն մէկ կորուստը ցաւալի է, բայց ինչպէ՞ս կարելի է պատէն աւելի պապական ըլլալ եւ Թուրքիոյ երկրաշարժէն աւելի ցաւ գգայ, քան արդէն 58 օր շրջափակումի մէջ գտնուող Արցախի ժողովուրդին ի տես. Ինչ որ կը կատարուի է հոն ցեղասպանութիւն է եւ աղետ, որ օր ըստ օրի աւելի կը խորանայ, երբ արցախից հազարաւոր մանուկներ, ամբողջ աշխարհի կոյր աչքերուն առջեւ այս խիստ ծանոնական մէջ սովամահ կ'ըլլան, զրկուած ապրելու ամենէն տարրական միջոցներէն»:

«Երբ կը հետեւիս աշխարհի լրատուամիջոցներուն եւ քաղաքական գործիչներուն, կը տեսնես որ բոլորին ուշադրութիւնը Թուրքիոյ վրայ կեդրոնացած է եւ բոլորն ալ կը փութան օգնութիւն հասցնել Թուրքիոյ: Բայց արդէս թէ Սուրիոյ երկրաշարժը երկրաշարժ չէ եւ Սուրիան կարիք չունի անմիջական օգնութեան. Կամ արդէս ապրելու բոլոր միջոցներէն զրկուած Արցախի ժողովուրդը մարդկային էակներ չեն աշխարհի աչքին»:

«Վերջապէս ինչպէ՞ս կարելի է շեփոհարել մարդու իրաւունքները, միաժամանակ անտեսել, անտարբերութեան մատնել, ոտնահարել իր ծննդավայրին, իր երկրին մէջ ապրելու իրաւունքէն զրկուած 120.000 մարդոց ձայնն ու ճակատագիրը: Կամ բաւարարուիլ եւ գոհանալ պարապ յայտարարութիւններով եւ անգործութեամբ ...»:

«Երկու չափ, երկու կշիռով ապրող աշխարհի կեղծ դէմքը դիտելն իսկ ստիպ է արդէն ...»:

Ճիշդ է, որ այս ալ խօսք է միայն, բայց մխիթարական է մեզի համար, որովհետեւ կը տեսնենք թէ ի վերջոյ կան ազնիւ մարդիկ, որոնք ճիշդը տեսնելու եւ այդ ճիշդին մասին խօսելու քաջութիւնը ունին:

Ի՞նչ ալ որ ըլլան պայմանները, Սուրիան անգամ մը եւս ցոյց տուաւ, որ արտաքին խնչընդոտները չեն կրնար փոխել այս ազնիւ ժողովուրդին մարդասիրութիւնն ու իրերօգնութիւնը, իսկ հալէպահայ գաղութը հաստատեց իր մայր ըլլալու կարգավիճակը, անմիջապէս կազմակերպուելով եւ լաւագոյնը ընծայելով քաղաքի տուժած ժողովուրդին:

Բայց ... «Ա՛յ կը բաւէ, տէ՛ր Աստուած ...»:

«ԻՆՉՊԷՍ ԴԱՇՏՊԱՆՈՒԼ»

Սկիզբ՝ Էջ 3

Մասնագէտները պարզաբանելով երկրաշարժէն պաշտպանուելու ձեւերը, անհրաժեշտ նկատեցին խուճապի չմատնուիլ եւ որպէս ծնողներ եւ մեծահասակներ խոհեմութեամբ վարուիլ երկրաշարժի պահուն: Անոնք անդրադարձան շէնքերէն ապահով դուրս գալու յարմարութիւններուն: Ապա, ներկաները տեսերիզի ցուցադրութեամբ լուսաբանութիւններ ստացան վերոյիշեալ նիւթին շուրջ:

Աւարտին, Սրբազան Հայրը փոխանցեց իր սրտի խօսքը, երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն յայտնելով մարդասիրական խումբի մասնագէտներուն, որոնք աջալուրջ ծառայութեամբ մեծ պատիւ եւ քաջալերանք ներշնչեցին սուրիացի քաղաքացիին եւ սուրիահայերուն:

Սրբազան Հայրը աղօթեց մասնագէտներուն պաշտպանութեան համար եւ կատարեալ յաջողութիւն մաղթեց անոնց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆՊԱԿՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՕԴԱՆԱԻ ՀԱՆԴ ՇԱՄԱՆՈՒՄԸ

Երեքշաբթի, 14 Փետրուարին, Հալէպի միջազգային օդակայանի հասաւ Հայաստանի Հանրապետութեան մարդասիրական օժանդակութեան երկրորդ օդանաւը, որպէս աջակցութիւն Սուրիոյ ժողովուրդին:

Շուրջ 30 թոնի հասնող օժանդակութիւնը կ'ընդգրկէր սննդամթերք, դեղորայք եւ հանդերձ:

Օժանդակութիւնը յանձնուեցաւ Սուրիական Կարմիր Մահիկ կազմակերպութեան:

Ներկայ էր նաեւ Հայաստանի Հանրապետութեան Հալէպի Հիւպատոսութեան խորհրդակալ, հիւպատոս Բաբգէն Պատալեան:

Նոյն օդանաւով Հալէպ գտնուող Հայաստանի Հանրապետութեան որոնողափրկարարական խումբը, ավարտելով իր աշխատանքը Հալէպի երկրաշարժէն վնասուած շրջանին մէջ, վերադարձաւ Հայաստան:

Հայաստանի մարդասիրական խումբը այնուհետեւ ընդունեց Հալէպի նահանգապետը, որ իր երախտագիտութիւնը յայտնեց հայ փրկարարներուն եւ անոնց յանձնեց Հալէպի նահանգապետարանի շնորհակալագիր իրենց ցուցաբերած աջակցութեան համար:

ՍՕ ԽԱՀԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՅԵՏ ԱՂԵՏԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՅՑ

ՍՕ Խաչի Շրջ. Վարչությունը երկրաշարժին յաջորդող օրերուն լծուեցաւ աշխատանքի իրականացնելով բարեսիրական եւ մարդասիրական անհրաժեշտ ծրագիրները:

Երկրաշարժին յաջորդող ժամերուն վարչությունս այցելեց ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կեդրոն, ստուգելու կառուցի ապահովական իրավիճակը: Բարեբախտաբար, շէնքը գրեթէ անվնաս էր, բայց երկրաշարժի յաջորդող ժամերուն միութիւնս ցնցեց գոյժ մը՝ իր նուիրեալ ընկերուհիներէն Միրնա Միսասեան Թէնէքճեանի մեծ կորուստը:



Ապա յառաջիկայ ժամերուն վարչությունս ընթացք տուաւ հետեւեալ աշխատանքներուն.

Ա- Դարմանատան դռները բաց մնացին մինչեւ երեկոյեան ուշ ժամեր, շտապ ամոռջապահական խնդիրներ դիմաւորելու նպատակով:

Բ- Միութիւնս առաջարկ ստացաւ مؤسسه تازر للتنمية ի պատասխանատու Դայր Փոլ Պետնեանի գլխաւորութեամբ, եռօրեայ ծրագիրով ճաշ մատակարարելու փրկարար խմբակներուն: Ուստի, «Փեթակ» խոհանոցէն ներս.



- 7 Փետրուար 2023-ին պատրաստուեցան մօտաւոր 600 հոգիի ակրատ եւ ոսպապուր: Նոյն օրն իսկ հեռավարական յանձնախումբը իր «Պնակ Մը Տաք ճաշ» ծրագիրը գործադրեց, 140 անձի ճաշ մատակարարելով:



- 8 Փետրուար 2023-ին նոյն ծրագիրը շարունակուեցաւ, այս անգամ 1000 հոգիի միսով փիլաւ եւ ոսպապուր տրամադրելով:

- 9 Փետրուար 2023-ին, ծրագիրին երրորդ հանգրուանը եւս

յաջողութեամբ պատկուեցաւ 1000 հոգիի կրկին եւս սիսեռով փիլաւ եւ ոսպապուր պատրաստելով: Խոհանոցը աշխատանքի մէջ էր մինչեւ գիշերուան ուշ ժամեր:

Գ- Միութիւնս անսալով Պետական Ընկերային Ծառայութեան երկրաշարժէն տուժածներու օժանդակութեան կոչին՝ իր գորակցութիւնը յայտնեց եւ տրամադրեց փոքրիկներու կաթ (թիւով 400) նաեւ թէյ եւ շաքար:

Դ- 8 Փետրուար 2023-ին հայկական կեդրոններէ ներս ապաստանած հայրորդիներուն երեկոյեան տրամադրուեցան 1900 հոգիի կարկանդակի տեսականի նաեւ փոքրիկներուն կաթ (թիւով 350): Իսկ 9 Փետրուար 2023-ին «Շիրակ» վաճառատան արտադրանքներէն որպէս հիւրասիրութիւն գոյգ՝ Նոր Գիւղի եւ Վիլլաներու կեդրոններուն տրամադրուեցան սմբուկի, դդումի եւ նանրճի անուշ:

Ե- Միութիւնս Ազգ. Պատասպարանի կեդրոնը տրամադրեց SOS-ի օժանդակութեան խմբակին, որ պատասպարանի սաներուն հետ միասնաբար պատրաստեց թիւով 3000 ակրատ գանոնք բաժնելու հայկական կեդրոններու ապաստանեալներուն:

Զ- 9 Փետրուար 2023-էն սկսեալ Դարմանատան մնայուն բժիշկն ու բուժքոյրերը այցելութիւն տուին կեդրոնները անհրաժեշտ բժշկական ծառայութիւն մատուցելու գծով:

Է- Աշխատանոցէն ներս արդէն իսկ սկիզբ առաւ բուրդէ ծածկոյթներու (պաթանիա) պատրաստութիւնը ե՛ւ փոքրերու, ե՛ւ մեծերու, որոնք պիտի



տրամադրուին երկաշարժէն վնասուած արաբ ժողովուրդի զաւակներուն:

Որպէս յառաջիկայ ծրագիր Շրջ. Վարչությունը թելադրեց իր նստավայրի մասնաճիւղերուն մօտէն հետաքրքրուիլ իր անդամուհիներով, յատկապէս երեց եւ անտէր մնացած ընկերուհիներու առողջապահական վիճակով, նաեւ անոնց բնակարաններուն կրած վնասներով: Վարչությունս այս աշխատանքով նկատի ունի յառաջիկայ օրերուն, յետ մանրամասն ուսումնասիրութեան, անհրաժեշտ նիւթաբարոյական աջակցութիւն տրամադրել, նախապատուութիւն տալով իր անդամուհիներուն:



Վարչությունս նաեւ մօտէն հետաքրքրուեցաւ շրջաններու մասնաճիւղերու իրավիճակով եւ պատրաստակամութիւն յայտնեց երկրաշարժէն վնասուած շրջաններուն օժանդակել ըստ կարելոյն:

ՀՕՄ-ը իր «Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար» նշանաբանով եւ աշխարհասփիւռ մասնաճիւղերով, նոյնիսկ Արցախի ընկերուհիներով, աղէտի առաջին վայրկեաններէն փութաց իր նիւթական օժանդակութիւնը հասցնելու ՍՕ Խաչին: Ան յանձնառու է նաեւ անմիջական գոհողութիւններով շարունակելու իր առաքելութիւնը յանուն Սուրիահայութեան վերականգնումին:

www.kantsasar.com
www.kantsasar.com

Սկիզբ՝ էջ 1

ՆԱԽԱԳԱՆ ԱՍՏՆԱԿԱՆ ԶԱԼԵՊ ԱՅՅԵԼԵՆՅ

Ուրբաթ, 10 Փետրուար 2023-ին Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ եւ Առաջին Տիկինը Յալէպ ժամանեցին հետապնդելու Նահանգին իրավիճակը, ինչպէս նաեւ մարդասիրական օգնութիւններու



հասանելիութեան եւ բաշխման ընթացքը: Անոնք այցելեցին Յալէպի Պետական Յամալսարանի Յիւանդանոցին մէջ երկրաշարժէն տուժուածները, ինչպէս նաեւ Չէն ալ-Ապիտին մզկիթի եւ յոյն ուղղափառ համայնքի Մար Իլիաս եկեղեցւոյ մէջ ապաստանած երկրաշարժէն տուժած ընտանիքներուն: Ետքը Նախագահ Ասատ եւ Առաջին Տիկինը Լաթաքիա ժամանեցին: Անոնք այցելեցին «Թշրին» պետական հիւանդանոցի մէջ երկրաշարժէն տուժուածները, ինչպէս նաեւ «Պասէլ ալ-Ասատ» կեդրոնին մէջ ապաստանած երկրաշարժէն տուժած ընտանիքները: Նախագահ Ասատ եւ Առաջին Տիկինը այցելեցին նաեւ Ճապլէ քաղաքին «Ղազալաթ» թաղամասը՝ հետապնդելու համար փլատակներէն դուրս բերուած գոհերուն աշխատանքները:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՄՏՈՒԳՈՒՄ

Յալէպի Նահանգապետարանը բնակարաններու վնասուածքներու ստուգման համար տրամադրեց երկրաչափներէ բաղկացած մարմին մը, որ մինչ օրս կ'այցելէ բնակարանները եւ կը ստուգէ անոնց վնասուածքներն ու ապահովական վիճակը:



Սուրիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ Նահանգներուն, յատկապէս երկրաշարժէն տուժած շրջաններուն արեան տուուլութեան կեդրոններէն ներս ապահովեց արեան բոլոր խմբաւորումներու անհրաժեշտ քանակ՝ վատառողջ պարագաներու արեան կարիքի պարագային:

ՍՈՒԻՈՅ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐՈՒ ՄԵԿ ՄԱՍԸ ԶԵՂԵԱԼ ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻ

Երկրաշարժէն քանի մը օր ետք, ԱՄՆ Սուրիոյ դէմ պատժամիջոցներէն մաս մը 180 օրուան համար չեղեալ համարեց: Սոյն որոշումով արտօսութիւն տրուեցաւ միայն Սուրիա նիւթական եւ մարդասիրական օգնութիւններ ուղարկելու, մինչդէռ Սուրիոյ ժողովուրդին դէմ տնտեսական պատժամիջոցները կը շարունակուին բանեցուիլ:



ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ՕԺԱՆՊԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դամասկոսի եւ Յալէպի Միջազգային Օղակայան ժամանեցին հարիւրաւոր թոն մարդասիրական օգնութիւններով բեռնուած օդանւեր՝ արաբական եւ եւրոպական երկիրներէ, ինչպէս Յայաստան, Ռուսիա, Իրան, Յնդկաստան, Ղազախստան, Վենեզուելա, Չինաստան, Պանկլատշ, Պելառուսիա, Դանիա, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Իրաք,

Լիպիա, Ալճերիա, Օման, Եգիպտոս, Թունիս, Յորդանան եւ Սեուտական Արաբիա:

Յայաստանէն, Ալճերիայէն, Չինաստանէն եւ այլ երկիրներէ ժամանեցին նաեւ փրկարարներու խմբակներ: Անոնք երկրաշարժէն վնասուած շրջաններուն մէջ փոյլ եկած շէնքերուն փլատակներուն տակէն մարդկային կեանքեր փրկելու աշխատանքին լծուեցան:



14-Սուրիական կառավարութիւնը մարդասիրական օգնութիւններով բեռնուած փոխադրականքներ առաջին անգամ ըլլալով Իտլիպ ուղղեց՝ երկրաշարժէն տուժուածներուն օգնելու:

15-Յայաստանի, Ռուսիոյ, Իրանի, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Ալճերիոյ, Յորդանանի, Եգիպտոսի, Իրաքի, Պաղեստինի, Պահրէնի, Օմանի, Վենեզուելայի, Մորիթանիայի, Աբխազիոյ Նախագահները

հեռաձայնային հաղորդակցութեամբ իրենց խորին ցաւակցութիւնները յայտնեցին Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատին՝ երկրաշարժի գոհերուն համար, շեշտելով իրենց զօրակցութիւնը Սուրիոյ ղեկավարութեան եւ ժողովուրդին եւ յայտնելով իրենց պատրաստակամութիւնը՝ օգնութեան ձեռք երկարելու Սուրիոյ:



Նախագահ Ասատ ցաւակցագիրներ ստացաւ նաեւ բարեկամ երկիրներէ, որոնք իրենց կարգին զօրակցեցան Սուրիոյ եւ օգնութիւն ցուցաբերելու պատրաստակամութիւն յայտնեցին:

Յետ երկրաշարժին, Նախագահ Ասատ յաջորդաբար ընդունեց Արաբական Միացեալ Էմիրութիւններու միջազգային գործակցութեան եւ արտաքին գործոց Նախարար Շէյխ Ապտալա պըն Չայէտ Ալ Նահեանը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը, լիբանանեան Նախարարական պատուիրակութիւն մը, Նախագահութեամբ՝ Լիբանանի արտաքին գործոց Նախարարի Լեյալտոնակատար Ապտալա Պու Յապիպի, Յամաշխարհային Առողջապահութեան կազմակերպութեան ընդհանուր տնօրէն Թետրոս



Ատհանոմ Կեպրեսոս եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը, մարդասիրական հարցերու եւ արտակարգ պարագաներու ՄԱԿ-ի քարտուղարի պաշտօնակատար Մարթին Կրիֆիթի եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը, Կարմիր Մահիկի միջազգային յանձնախումբի Նախագահ Մարիանա Իկըր եւ Յորդանանի փոխվարչապետ, արտաքին գործոց Նախարար Այման Սաֆատի:

Երկրաշարժէն քանի մը օր ետք, Յամաշխարհային Առողջապահութեան կազմակերպութիւնը Թուրքիոյ եւ Սուրիոյ մէջ տեղի ունեցած երկրաշարժը դարերէ ի վեր Եւրոպայի հարեւանութեան տեղի ունեցած ամենամեծ աղետը յայտարարեց:



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ



- 6 Փետրուարին Սուրիան ցնցած ահաւոր երկրաշարժին զոհուեցաւ 36Ը-ի պասքեթի կրտսերներու խումբի խաղացող Ալպեր Թենէքէճեանը, բնակարանին փլուզման հետեւանքով:

-Սուրիոյ ֆութպոլի դաշնութիւնը ֆութպոլի Ա հաւաքականի մարզիչ Աշանակեց Արժանթինցի Աշանաւոր մարզիչ Զեքթոր Քոփերը: Անոր աշխատակազմին մաս պիտի կազմէ Եգիպտոսի հաւաքականի Աշանաւոր դարպասապահ Իսամ Զատիրին որպէս դարպասապահերու մարզիչ:

-Ուրբաթ օր Ռուսապէ - ճէշ մրցումի ընթացքին Սուրիոյ հաւաքականի եւ ճէշ խումբի խմբապետ Ահմատ ալ-Սալէի կարմիր քարթ ստանալէ ետք իրաւարարին վրայ յարձակելով հարուածեց անոր: Դամասկոսի ակումբը յատուկ յաղորդագրութեամբ ներողամտութիւն խնդրեց իրաւարարէն, ինչպէս նաեւ պատժական տնօրինում սահմանելով դադրեցուց ալ-Սալէի կիւրակաւ վճառումները մինչեւ ցնոր տնօրինում:

-Սուրիոյ ֆութպոլի երթի փուլի աւարտին Ռուսապէն 20 կետերով գլխաւորեց աղիւսակը, անոր յաջորդեցին ճէշը, Ճապլէն եւ Զալէյի Աիլին 19 կետերով:

-Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Սուրիացի պիլիարտ խաղացող Մուհամատ Ալ-Սուֆին հասաւ համաշխարհային Պիլիարտի ախոյեանութեան աւարտական մրցումին, որ տեղի կ'ունենայ Լեհաստանի մէջ:

ՄԻՋԱԶԱՅԻՆ

ՍԱՆ ԺԵՐՄԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ՄԵՍՍԻՆ ՊԱՅՏԵԼ ԿԸ ՓԱՓՈՔԻՆ

Ֆրանսայի տարիներու ախոյեան Փարիզ Սան Ժերմանի մարզական տնօրէն Լուիս Բամփոսը հաստատեց, որ կը քննարկուի աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի 35 տարեկան յարձակող Լիոնել Մեսսիի հետ համագործակցութեան երկարաձգումը: «Զիմա մենք կը քննարկենք Մեսսիի նոր պայմանագիրը: Բոլորս ալ կը փափաքենք որ ան շարունակէ մնալ մեր խումբին հետ: Մենք ուրախ կը մնանք, եթէ ան երկարաձգէ պայմանագիրը», Բամփոսի խօսքը արձանագրած էր Telefoot-ը: Աւելցնենք, որ Մեսսիի գործող պայմանագիրը ֆրանսական ակումբին հետ նախատեսուած է մինչեւ այս տարեշրջանի աւարտը:



ԱՆՍՕ ՖԱԹԻՆ ՊԱՅԱՆՁՈՒԾ Ե ՄԱՆՉԵՍԹԸՐ ԻՆԱՅԹՈՇԻ ԿՈՐՍԷ

Ըստ Diario Sport-ին, Անգլիական Մանչեսթըր Իւնայթըտի պատասխանատուները հետաքրքրուած են Սպանիոյ փոխախոյեան «Պարսելոնա»-ի եւ Սպանիոյ հաւաքականի յարձակող Անսո ֆաթիի ծառայութիւններով:



Բաթալոնեական ակումբը ամռան հաւանաբար քննարկէ 20-տարեկան ֆութպոլիստի տեղափոխութիւնը եթէ ստանայ գրաւիչ առաջարկ մը: Անսո ֆաթին մշտական տեղ չունի սպանացի Զավիի գլխաւորած կազմին մէջ, եւ ան այլ առիթներով ներկայացուցած է իր դժգոհանքը: Սպանիոյ ընթացիկ ախոյեանութեան ֆաթին մասնակցած է 19 հանդիպումի եւ նշանակած է միայն ետեք կոլ: Անոր ծառայութիւններով հետաքրքրուած են նաեւ Պայերն Միլիւնը, Արսենալն ու Թորթնհամը:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 426)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1				■								■
2							■				■	
3		■		■		■					■	
4												
5				■	■	■	■	■	■	■	■	■
6							■			■		
7			■		■			■			■	
8												
9			■		■				■			
10	■	■		■						■		
11	■				■							
12						■		■				■

Հորիզոնական

1. Գերմանացի երաժիշտի մականունը: Բոցավառ:
2. Ամրակուռ: Արական անուն:
3. Սևտուկ:
4. Կոմիտաս վարդապետին նախասիրած երաժշտական գործիքը: Զակառակ՝ ժապաւեն:
5. Ցուցական դերանուն: Զակառակ՝ 3001:
6. Նախանձ: Եական բայ: Անձնական դերանուն:
7. Տարածքի միւտը: Զակառակ՝ անձնական դերանուն: Ձայնաւոր տառեր:
8. Ոխակալ: Զակառակ՝ խումբ:
9. Զակառակ՝ իրերայաջորդ տառեր: Ծրագ, լոյս:
10. Շահուճեանի արծիւին անունը: Զակառակ՝ ցաւի ճիչ:
11. Սուրբ Զոգիին պտուղներէն: Խաբեբայ: Անձնական դերանուն:
12. Զեղուկները պարպելու կոնաձեւ եւ խողովակաւոր գործիք: Ժամանում:


Ուղղահայեաց

1. Փեթակի թագուհի:
2. Անձնական դերանուն: Զակառակ՝ «Տիրոջ մարդ» իմաստը ունեցող արական անուն: Ցուցական դերանուն:
3. Ճանկաւոր երկաթ, գործովուն յատակը կ'իջեցնեն: Զպարտ:
4. Իմաստալից խօսք՝ ասացուածք: Զակառակ՝ տարածքի միւտը:
5. Թուանշան մը:
6. 5060: Տաժանելի:
7. Զակառակ՝ տառի մը անունը: Նեղ ճամբայ:
8. Լաւ: Ծովի աւազակ:
9. Շատակեր: 403:
10. Զակառակ՝ կրօնաւորի սրածայր գլխածածկ: Զաստատական պատասխան:
11. Ոչ հասուն:
12. «Ախր ես ինչպէ՛ս վեր կենամ գնամ» բանաստեղծութեան հեղինակը (անուն մականուն):

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 425)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	ի	ր	ո	յ	գ	ի	ր	ք	ա	պ	
2	ն	ր		ն	ւ	ա	լ	լ	ա			
3	դ	ա	գ	ա	ն	ճ	ե	ց	ո	ց	ր	
4	ա			հ	ա					ւ	ն	ւ
5	ն	շ			ա	ր	ա	գ		ւ	ւ	ա
6	ա	ա				ա	ր	ա				ւ
7	բ	բ	դ	օ	ն		ւ	ա		ա	թ	ա
8	ո	ա		ն		դ	ա	տ	ա	ր	ա	ն
9	յ	լ	ր		ա	յ	ր	ի	ա	լ	ր	
10	ծ	ա	թ	ւ	լ		ն	ւ	ա	յ	ի	ա
11	լ		ա	լ	ա	ւ	ս	ի	ն	ա		
12	ւ	ր	ի	ն	գ		ն	ե	տ			մ

ԼՈՒՐԵՐ



6 ՓԵՏՐՈՒԱՐ 2023-ԻՆ ՍՈՒՐԻԱՆ ՃՆՅԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՀԵՏԵԿԱՆՔՆԵՐԸ

